

Կ.Շ.ԱՐԲՈՒՅԱՆ

ԼԵԶԿԱԲԱՆԱԿԱՆ  
ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՁԵՌՆԱՐԿ)



Նվիրում եմ իմ սիրելի մայրիկի՝

Լիլիա Արմենակի Քոչարյանի  
լուսավոր, սուրբ հիշատակին



ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

7(03)  
Ա 16

Կ.Շ.ԱԲՐԱՅԱՄՅԱՆ

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ  
ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ)

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ  
ОБОЗНАЧЕННОГО ЗДЕСЬ СРОКА

10/109	27.02.13			
21/18	27	19.10.18		
15/19/25	25.10.19			

Երևան  
«Լինգվա» հրատ.  
2009 թ.

ՀՏԴ 80 (091) (07)  
ԳՄԴ 81ց7  
Ա 161

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երաշխավորված է Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության և Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի գիտական խորհրդի կողմից:

Գլխավոր խմբագիր՝ ք.գ.դ., պրոֆ. Լ.Ս.Յոզեֆյան


Արքահայան Կ.Շ.  
Ա 161 Լեզվաբանական ուսմունքների պատմություն: Ուսումնական ձեռնարկ: -Եր.: Լինգվա, 2009, -80 էջ:

Սույն ձեռնարկը նախատեսված է լեզվաբանական համալսարանների, բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաև լեզվաբանության պատմության խնդիրներով զբաղվող անձանց համար:

ՀՏԴ 80 (091) (07)  
ԳՄԴ 81ց7

ISBN 978-9939-56-044-1

© Արքահայան Կ., 2009թ.  
© «Լինգվա», 2009թ.



Քերականական արվեստը անհիպ աշխարհում: Անվանման ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ..... 6

Լեզվաբանական սկզբնականների շարժումները Հին Զինասանոսի և Հին Հնդկասանոսի: Հինարևոսեան Լեզվաբանական սկզբնականներ. ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ ԴՊՐՈՑ: ՀՈՈՄԵԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ..... 10

ԱՐԱՐԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ..... 18

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴՐՈՒՄ: ՄԻՋՆԱԴՐՈՅԱՆ ՊԱՏՐԻՍՏԻԿԱ..... 21

ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԻ ԽՆԴԻՐԸ XIII ԴԱՐՈՒՄ: ՌԵԱԼԻԶՄ և ՆՈՄԻՆԱԼԻԶՄ: ԱՐԵԼՅԱՐԻ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ՝ ԿՈՆՑԵՊՏՈՒԼԻԶՄ, ՄՈՂՈՒՄԻ / ԴԻԿՏՈՒՄԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ: XIII ԴԱՐԻ ԱՐԻՍՏՈՏԵԼԻԶՄԸ: ՍԽՈԼԱՍՏԻԿԱՅԻ ՔՆՆԱԴՍՏՈՒՄԸ: ՄՈՂՈՒՄՆԵՒԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ: XIV ԴԱՐԻ ՆՈՄԻՆԱԼԻԶՄԸ..... 25

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՆԵԴԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ: ՌԵՆԵՍԱՆՍ ԵՎ ՌԵՖՈՐՄԱՑԻԱ: ՖՐԱՆՑԻՍԿՈ ՍԱՆԶԵՍԻ «ՄԻՆԵՐԿԱ» ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ..... 33

ՊՈՐ-ՈՂՅԱԼԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԴՐԱ ՍԿՋՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ: 18-ՐԴ ԴԱՐԻ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՊԱՏՄԱՅԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ՉԱՎՈՐՄԱՆ ԱՈՍՋԻՆ ՓՈՒԼԸ: ՈՈՄԱՆՏԻԶՄԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ..... 39

ՊԱՏՄԱՅԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ. Ֆ.ՐՈՊՊԻ ԿՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ: Ռ.ՈՍՍԿԻ ՏԵՍԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, Յ.ԳՐԻՍԻ «ԳԵՐԱՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ», Ա.ՎՈՍՏՈԿՈՎԻ «ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՍԼԱԿՈՆԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ»..... 45

Վ.ՖՈՆ ՀՈՒՄՐՈՂԴՏԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ. ԼԵԶՎԻ ԾԱԳԱՆ ԽՆԴԻՐԸ, ԼԵԶՎԻ և ԺՈՂՈՎՐԴԻ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ, ԼԵԶՎԻ ՉՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ..... 51

ՊԱՏՄԱՅԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ II ՓՈՒԼԸ:  
Ա.ՇԼԱՅԽԵՐԻ «ԾՆՆԴԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԻ» ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ .....56

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ: Հ.ՇՄԻՂՏԻ «ԱԼԻՔՆԵՐԻ»  
ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ: ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ:  
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՌԻՍԱՍՏԱՆՈՒՄ:  
ԵՐԻՏՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԼԱՅՊՑԻԳԻ ԴՊՐՈՑ .....59

ՄՈՍԿՎԱՅԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ: ԿԱԶԱՆԻ ԴՊՐՈՑ .....66

ԵՐԻՏՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴՍՏՈՒՄԸ: Գ.ՇՈՒՄԱՐԴՏԻ  
«ՔԱՌԵՐԻ և ԻՐԵՐԻ» ԴՊՐՈՑԸ.....70

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. Կ.ՖՈՍԼԵՐ  
.....73

ՆԵՈԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....75

### ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Սույն ձեռնարկը նախատեսված է լեզվաբանական համալսարանների, բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաև լեզվաբանության պատմության խնդիրներով զբաղվող անձանց համար:

Ձեռնարկի նպատակն է ծանոթացնել լեզվաբանության հիմնական ուսմունքների էությանն ու զարգացմանը նպաստող միտումներին հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարի սկիզբը, ինչպես նաև բացահայտել ժամանակակից լեզվաբանության որոշ ոլորտներում և տեսություններում առկա այն կապերը, որոնք հաջորդաբար փոխանցվել են լեզվաբանական գիտության ակունքներից մինչև մեր օրերը:

**ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ ԱՆՏԻԿ ԱՇԽԱՐՀՈՒՄ:  
ԱՆՎԱՆՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ**

Ցանկացած գիտության պատմություն սերտորեն կապված է ամբողջ պատմական դարաշրջանի զարգացման ուսումնասիրության հետ: Այս առումով բացառություն չէ նաև լեզվաբանության պատմությունը: Գոյություն ունեն լեզվաբանության մի քանի շրջանաբաժանումներ: Համաձայն ամենաընդհանուր շրջանաբաժանման՝ առանձնացվում է երկու հիմնական փուլ՝ քերականական արվեստ և քերականական գիտություն:

Քերականական արվեստը ծագել է անտիկ ավանդույթների հիման վրա և լեզվական համակարգի համակողմանի նկարագրություն: Քերականական արվեստի յուրահատկությունն այն է, որ դրա հիմքում ընկած է ճշգրտության, նորմատիվության գաղափարը: Դրա խնդիրն է նկարագրել օրինակելի, կանոնական լեզվական երևույթներ և սովորեցնել լեզվի ճիշտ (նորմատիվ) գործածությանը: Այսպիսով, քերականական արվեստը կրում է *կարգատրական* (prescriptive) բնույթ: Այն ներկայացված է անտիկ և միջնադարյան քերականական ուսմունքներում:

Ի տարբերություն քերականական արվեստի, քերականական գիտությունը ձգտում է բացատրել լեզվի կառուցվածքի և գործառնան օրենքները, նկարագրել ոչ թե այն, ինչ պետք է լինի, այլ այն, ինչ իրականում գոյություն ունի: Այդպիսով, քերականական գիտությունը կրում է *նկարագրական* (descriptive) բնույթ և սկսվում է համընդհանուր քերականությամբ:

Քերականական արվեստի ձևավորումն սկսվում է անտիկ դարաշրջանում: Ընդ որում, «անտիկ, հնադարյան դարաշրջան» հասկացությունն ունի տարբեր մեկնաբանություններ: Այսպես, Յու. Ռոժոժեստվենսկին նշում է, որ արևմտյան պատմագիտության տերմինաբանության մեջ այն նշանակում է ավանդական հունական – լատինական քաղաքակրթությունը: Արևելագիտության մեջ «անտիկ դարաշրջան» ասելով հասկանում են այն մշակույթը, որը ձևավորվում է քաղաքակրթության կազմավորման ընթացքում: Դա, փաստորեն, գրի, գրավոր հուշարձանների ստեղծման դարաշրջանն է: Սրա հետ կապված կարելի է խոսել չինական, հնդկական և միջերկրածովյան ավանդույթի մասին:

Ինչ վերաբերում է լեզվաբանական ավանդույթներին, ապա որոշ մշակույթներում, օրինակ՝ արաբական, ճապոնական, գիրը ստեղծվել է ավելի ուշ դարաշրջանում:

Լեզվի հնադարյան տեսություններում առանձնանում են երկու հիմնական բնագավառներ՝ քերականական արվեստը և այն, ինչը կարելի է անվանել «լեզվի փիլիսոփայությունը», որի հիմնական խնդիրներից մեկն էր անվանման տեսությունը: Ընդ որում, եթե անվանման տեսության ոլորտում բոլոր հնադարյան ավանդույթները բնորոշվում են հայացքների ընդհանրությամբ, ապա քերականական արվեստի տեսանկյունից յուրաքանչյուր ավանդույթ առանձնահատուկ է, քանի որ ավանդույթի բնույթը անմիջականորեն կապված է նկարագրվող լեզվի առանձնահատկությունների հետ:

Անվանման տեսությունը ձևավորվում է անտիկ փիլիսոփայության ազդեցությամբ, այն ուսումնասիրում էր լեզվի էությունը և փիլիսոփայական աշխարհընկալման հիմնական մասերից էր: Այս տեսությունը քննում է երկու հիմնահարց՝ անվան «ճշգրտությունը» և անվան ու առարկայի միջև գոյություն ունեցող հարաբերությունը:

Բոլոր տեսությունների համար ընդհանուր է այն, որ անունը դիտվում է որպես ստեղծագործ, գործառնական, մոգական բնույթ ունեցող մի հասկացություն: Անունը ոչ թե առարկայի պայմանական անվանումն է, այլ այն, ինչ պարունակում է դրա հետ վարվելու օրենքները կամ բացատրում է առարկայի «վարքը»: Այսպիսով, անունը հավասարեցվում էր գործին, գործունեությանը: Ճիշտ գործելու համար պետք էր ճիշտ ստեղծել և գործածել բառերը, այլապես կխախտվեին բոլոր օրինաչափությունները:

Անվանման տեսության հիմնական դրույթները ամենածավալուն տեսքով մեզ են հասել հին հույների աշխատություններում: Հին հունական փիլիսոփայության մեջ գոյություն ունեին երկու իրար հակադիր հայացքներ առարկաների և նրանց անվանումների հարաբերության խնդրի վերաբերյալ:

Ըստ **Հերակլիտի** (540 – 480 մ.թ.ա.), օրինակ, ցանկացած բառ (անուն) սերտորեն կապված է այն իրի հետ, որը նշանակում է: Անունները արտացոլում են նշանակող օբյեկտների էությունն ու բնույթը: Այս հայեցակերպը, որի համաձայն անունները բնորոշվում են իրերի էությամբ, անվանվեց *physei* («ըստ բնության»): Ի տարբերություն **Հերակլիտի**, **Դեմոկրիտը** պնդում էր, որ առարկաները անվանվում են ոչ թե ըստ իրենց էության, այլ որպես արդյունք մարդկանց միջև որոշակի համաձայնության: Այս տեսությունը կոչվեց *thesei* («ըստ սովորության, դրության»):

Որպես ապացույց Դեմոկրիտը օրինակ էր բերում բազմիմաստ բառերը և այն փաստը, որ շատ առարկաներ ունեն մի քանի անվանում: Բացի այդ, ժամանակի ընթացքում որոշ բառեր

փոխարինվում են ուրիշներով, իսկ տարբեր լեզուներում միևնույն առարկան ունի տարբեր անվանումներ:

Երկու տեսությունների քննարկմանն է նվիրված Պլատոնի (428 – 348 մ.թ.ա.) «Կրատիլոս» տրամախոսությունը, որտեղ մասնակիցները՝ Յերմոգենն ու Կրատիլոսը համապատասխանաբար արտահայտում են Յերակլիտի և Դեմոկրիտի հայացքները, իսկ երրորդ մասնակիցը՝ Սոկրատը, փորձում է գտնել ճշմարտությունը, որը հետևյալն է: Անունը յուրահատուկ մի գործիք է, և ինչպես ցանկացած գործիք, այն պետք է ստեղծվի մասնագետների կողմից, որոնց Պլատոնը անվանում է «*օրենք ստեղծողներ*»: Գիշտ անուններ ստեղծելու համար այդ մարդիկ պարտավոր են՝ 1) հասկանալ առարկաների բնույթը, էությունը, որը և պետք է արտացոլվի անվանման մեջ, 2) առաջնորդվել որոշակի դրույթներով, օրենքներով, որոնց հիման վրա ստեղծվում են բառերը:

Ցանկացած վարպետի գործ գնահատվում է այն մարդկանց կողմից, որոնք մասնագիտորեն օգտագործում են ստեղծված գործիքը: «*Օրենք ստեղծողի*» աշխատանքը պետք է գնահատի «հարցադրում կատարելու և պատասխան տալու» ունակությամբ օժտված մասնագետը, որին Սոկրատն անվանում է «*դիալեկտիկ*»: Նա ստուգում է՝ արդյոք անունների ճշգրտությունը համապատասխանում է իրերի օգտագործման ճշգրտությանը: Անունները որոշում են իրերի օգտագործման օրենքները, իսկ իրերի օգտագործումը՝ անվանը համապատասխան, ստուգում է անվան ճշգրտությունը: Անունը արտացոլում է իրի էությունը, սակայն այն չի նույնանում իրի հետ, հետևաբար իրը կարող է ունենալ մի քանի տարբեր անուն, որոնք տրվում են ըստ համաձայնության: Այսպիսով, ստացվում է, որ «*բնությունը*» և «*սովորությունը*» միևնույն անվանման գործընթացի երկու կողմերն են:

Ըստ Պլատոնի՝ բոլոր բառերը կարելի է բաժանել «առաջնայինների» և «ավելի ուշ ստեղծվածների»։ Վերջիններս ստեղծվել են առաջնային բառերից, «առաջնայինները» ստեղծվել են այն զուգորդումների հիման վրա, որոնք գոյություն են ունեցել առանձին հնչյունների և իրերի տարբեր հատկանիշների միջև:

«Առաջին» բառերը յուրահատուկ նմանակումներ էին: Թեպետ իրը և դրա անվանումը չեն նույնացվում, սակայն հեռավոր և միջնորդված կապեր դրանց միջև, այնուամենայնիվ, գոյություն ունեն:

«Ավելի ուշ ստեղծված» (երկրորդային) բառերը ստեղծվում են առաջնայինների հիման վրա, և ակնհայտ է դրանց կապը առաջնային անվանման հետ: Այսպես Պլատոնը հանգում է բառի

ներքին ձևի գաղափարին: Ըստ Վ.Թոմսենի՝ Պլատոնին կարելի է համարել *հնչյունախորհրդանշության (символизм)* հիմնադիրը:

**ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅՑՆԵՐԻ ՉԱՎՈՐՈՒՄԸ ԴԻՆ  
ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԴԻՆ ՉՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ: ՀՈՒՆԱՐՈՒՄԵՎԱԿԱՆ  
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ. ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ ԴՊՐՈՑ:  
ՀՊՈՄԵՎԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Լեզվաբանական ավանդույթը ձևավորվում է այն ժամանակ, երբ անհրաժեշտություն է ստեղծվում սովորեցնել ոչ միայն գրել և կարդալ, այլև ընդհանուր առմամբ լեզու սովորեցնել: Յուրաքանչյուր ավանդույթ կապված է որևէ լեզվի ուսումնասիրության և նկարագրության հետ: Ոչ մի ավանդույթում չի ստեղծվել պատկերացում լեզվի զարգացման, դրա պատմական փոփոխությունների մասին: Լեզուն ընկալվում էր որպես անփոփոխ, ի սկզբանե տրված մի երևույթ, թեպետ և դիտվում էին իդեալից որոշ շեղումներ: Դրանով էլ պայմանավորված էր հետաքրքրությունը ստուգաբանության հանդեպ:

Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ մայրենի խոսակցական լեզվին: Այսպես, հունական ավանդույթը ձևավորվում է ոչ թե այն ժամանակ, երբ հունարեն խոսում էին միայն հույները, այլ հելլենիզմի դարաշրջանում, երբ հունարենը սկսեցին գործածել մի շարք երկրներում, իսկ հունական ավանդույթի կենտրոնը դարձավ ոչ թե Հունաստանը, այլ Ալեքսանդրիան: Արաբական ավանդույթը ստեղծվեց ոչ թե Արաբիայում, այլ Բասրայում և Կուֆայում, երբ արաբները տարածվեց Արաբիայի սահմաններից դուրս:

Ինչ վերաբերում է Հին Հինաստանին, ապա այնտեղ գրական լեզուն շատ չէր տարբերվում խոսակցականից, սակայն չինական գրի դժվարությունը պարտադրում էր հատուկ և տևական ուսուցում:

Այսպիսով, լեզվաբանական ավանդույթների ստեղծումը և զարգացումը պայմանավորված էր լեզվի մշակույթի ուսումնառությամբ, որը մայրենի չէր տվյալ հանրության կամ դրա որոշակի զանգվածի համար: Բոլոր ավանդույթներում նկատվում էր նորմատիվ մոտեցում լեզվի նկատմամբ: Նկարագրության նյութ կարող էին լինել բանավոր տեքստեր (հունական ավանդույթ), քերականություններ (հնդկական, արաբական, լատինական), գրավոր տեքստեր՝ սուրբ (Աստվածաշունչ, Ղուրան) կամ աշխարհիկ գրքեր (Հինաստան և Ճապոնիա): Համարյա բոլոր ավանդույթներում ամենազարգացած մակարդակը հնչյունականն էր, թեպետ հնադարյան ավանդույթներում չէին տարբերակում «հնչյուն» և «տառ» հասկացությունները:

Ամենահինը համարվում է հնդկական ավանդույթը: Սակայն նպատակահարմար է սկզբից խոսել չինականի մասին, որն այնքան յուրահատուկ է և ինքնատիպ, որ տարբերվում է մնացած բոլորից:

Դրա յուրահատկությունն այն է, որ այն միակ ավանդույթն է, որը ստեղծվել էր *հիերոգլիֆային* գիր ունեցող արձատական լեզվի հիմքի վրա: Հետևաբար, չինական գիրը գրանցում է ոչ թե հնչյունները, այլ ձևույթները, որոնք կարելի է դիտել որպես պարզ բառեր: Այսպիսով, հիերոգլիֆը հարաբերակցվում է իմաստի հետ և միայն իմաստի միջոցով հնչողության հետ: Չինական գրի դրականն այն է, որ այստեղ տարբերակվում են բազմաթիվ համանուններ, իսկ բացասական կողմն է նշանների բազմազանությունը:

Հնադարյան չինական գրերը վերագրում են մ.թ.ա. XVI – XV դդ.: Արդեն այն ժամանակ հիերոգլիֆը առանձին բառ էր նշանակում: Մ.թ.ա. VIII դարում տեղի ունեցավ չինական գրի առաջին բարեփոխումը, որի նպատակն էր ստեղծել բոլորի համար ընդհանուր չափորոշչային (ստանդարտ) նշաններ: Մ.թ.ա. III դարում միացյալ պետականության կազմավորման հետ մեկտեղ ստեղծվում է գրության միացյալ համակարգ, տեղի է ունենում գրավոր նշանների կառուցվածքաիմաստային տրոհում, որի արդյունքում բազմաթիվ բարդ հիերոգլիֆների տեղը զբաղեցնում են համեմատաբար քիչ թվով պարզ հիերոգլիֆների համակցություններ: Չինական գրի ժամանակակից կառուցվածքի վերջնական կազմավորումը տեղի է ունենում մ.թ. I-II դդ.:

Հին և միջնադարյան Չինաստանում գոյություն ուներ բանասիրության երեք ճյուղ. մեկը զբաղվում էր հնադարյան բառերի, մյուսը՝ գրի ուսումնասիրությամբ, երրորդը լեզվում փնտրում էր հնչյունային տարբերություններ: Թեպետ հնչույթաբանությունը ծագեց մյուս գիտություններից շատ ուշ, սակայն հենց դա մեծապես զարգացավ Չինաստանում: Իսկ քերականությունը սկսեցին տարբերակել միայն XVIII – XIX դարերում: Այսպիսով, չինական լեզվաբանության ուսումնասիրության հիմնական առարկան էր հիերոգլիֆը:

Չինական ամենահին բառարանագրական աշխատանքը Շի Զժուու Նյանն էր. այն հիերոգլիֆների ցուցակ էր, որը պարտադիր էր գրագիտություն սովորելու համար:

Առաջին հայտնի հիերոգլիֆների բառարանն էր Էրյան (III-II դ.մ.թ.ա.), որը կազմված էր թեմատիկ սկզբունքով: Այստեղ բոլոր հիերոգլիֆները բաժանված էին 19 թեմատիկ խմբերի՝ *անուններ, գործիքներ, երաժշտություն և այլն*:

Մեր թվարկության սկզբում ստեղծվում է Յան Սյունի Ֆանյան բառարանը, որի համար, ի տարբերություն Էրյայի, նյութ էին ծառայել ոչ թե հոգևոր (կանոնիկ), այլ բարբառային լեզվով գրված տեքստերը: Ընդ որում, նշվում էր նաև, թե այս կամ այն բառն որ բարբառից է անցել գիտական լեզու:

Ամենակարևոր աշխատությունը Սյու Շենի Շուվեն Ցզեցզի բառարանն է (100 մ.թ.): Սա առաջին բառարանն էր, որն ընդգրկում էր հեղինակին ծանոթ բոլոր հիերոգլիֆները, տրվում էր ոչ միայն դրանց իմաստը, այլև կառուցվածքը: Բառարանը կազմված է ոչ թե թեմատիկ, այլ «ձևային» սկզբունքով. հիերոգլիֆները տեղայնացված են ոչ թե ըստ իմաստի, այլ ըստ նշանի ձևի: Բառարանը կարելի է որոշ առումով համեմատել այբբենական բառարանների հետ: Բառարանը բաղկացած է 10000 հիերոգլիֆներից, որոնց հիմքն են կազմում 540 հիմնական տարրերը: Դրանք ժամանակակից չինարենագիտության մեջ կոչվում են «բանալիներ»:

Մ.թ. II դարում ստեղծվում է Ջյու Սիի Շիմին բառարանը, որը, ինչպես և էրյան, կազմված էր թեմատիկ սկզբունքով, սակայն այստեղ ցանկացած անուն գուգակցվում է ստուգաբանական վերլուծությամբ:

Չին հնչյունաբանները հայտնաբերեցին հիերոգլիֆների կարդալու և գրանցման հետաքրքիր միջոց՝ այսպես կոչված տրոհումը, որի օգնությամբ հիերոգլիֆի ճիշտ կարդալը հնարավոր է ցույց տալ երկու այլ հիերոգլիֆներ կարդալու միջոցով: Արմատական բառերը չինարենում բաղկացած են հիմնականում մեկ վանկից: Չինագետները տրոհում էին վանկը երկու մասի՝ առաջնայինի և վերջնայինի: Առաջնայինը բաղկացած է մեկ բաղաձայնից, մնացած հնչյունները ծայնավորները, կիսաձայնավորները և վերջնային բաղաձայնները կազմում են վերջնային մասը: Օրինակ՝ suan բառում [s] առաջնային, իսկ [uan] վերջնային մասերն են (инициаль - финаль): Հիերոգլիֆը կարդալու համար ընտրվում էին երկու այլ հիերոգլիֆներ այնպես, որ դրանցից առաջինը կարդացվեր նույն առաջնային բաղաձայնով, իսկ երկրորդը՝ նույն վերջնայինով, ինչպես և «տրոհվող» հիերոգլիֆը:

Գոյություն ունեին նաև հանգաբառարաններ: Դրանցում հնչյունային աղյուսակներում հորիզոնական գծի վրա տեղայնացված էին նույն հանգով հիերոգլիֆները (նույն հնչողությամբ), իսկ ուղղահայաց գծի վրա՝ հիերոգլիֆներ՝ նույն սկզբնական հնչյունով: Չինական բանասերները առաջինն էին, որ սկսեցին հնչույթաբանական ուսումնասիրություններ կատարել: Ընդ որում, հնչույթ էր համարվում հանգը: Առաջին հանգաբառարանն էր Շեն [եյը] (300 թ. մ.թ.):

V դարի վերջում սկսվեց տոների ուսումնասիրությունը: Կազմվեց 4 տոների դասական համակարգը:

Չինական լեզվաբանությունը ինտենսիվ զարգանում է XVII – XIX դդ.: Ուսումնասիրության առարկա են դառնում պատմական

հնչյունաբանությունը, ստուգաբանությունը և այլն: Չինական քերականության հիմնադիրներն են Վան Նյան – Սուենը և նրա որդին՝ Վան Ին – Չփին: XX դարի հայտնի լեզվաբան էր Չփան Բին – Վինը (1868 – 1936), որն զբաղվում էր նորմատիվ և պատմական հնչյունաբանությամբ և բարբառագիտությամբ:

Հնդկական լեզվաբանական ավանդույթը մոտ 2500 տարեկան է: Հին Հնդկաստանում առաջին անգամ ստեղծվեց լեզվի ամբողջական նկարագրությունը, ընդ որում՝ շատ բարձր մակարդակով: Հին հնդիկների գիրը հնչյունատառային էր: Սակայն գրույթը նշանակում էր ոչ թե հնչյունը, այլ վանկը, որը բաղկացած էր կամ բաղաձայնից, կամ բաղաձայնի և ընդհանուր ծայնավոր «ա»-ի համակցությունից: Մնացած բոլոր ծայնավորները նշանակվում էին դիակրիտիկ նշաններով: Այսպիսով, բաղաձայնները և ծայնավորները կազմում են երկու հարացույց, որոնք տեղայնացվում են տարբեր գծերում:

Քերականական նկարագրության հիմնական նպատակն էր սուրբ տեքստերի՝ Վեդաների լեզվի մաքրության պահպանումը, քանի որ խոսակցական լեզուները շատ էին տարբերվում դասական սանսկրիտից: Սա էլ պայմանավորեց առաջին հերթին հնչյունական նկարագրման կարևորությունը: Առաջին քերականական աշխատություններում նկարագրվում էր վեդայական տեքստերի ճշգրիտ հնչողությունը և նշվում էին առանձին քերականական նրբություններ: I հազարամյակում ստեղծվեցին Վեդաներում տեղ գտած անհասկանալի բառերի ցուցակները: Քիչ ուշ ստեղծվեց հատուկ առարկա՝ «ստուգաբանություն»: «Ռիգվեդան» ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ բառերի ցուցակները սկսեցին խմբավորել ըստ նմանության: Ստեղծվում են տարբեր աշխատություններ՝ նվիրված հնչյունաբանությանը, քերականությանը, բառագիտությանը և այլն:

Մ.թ.ա. V դարում Յասկան կազմեց Վեդաների լեզվի մեկնաբանություններ: Նրա աշխատությունը բաղկացած է թեմատիկ բաժիններից: Ներածության մեջ հեղինակը բացատրում է հիմնական քերականական հասկացությունները, բառերը քերականորեն բաժանում է չորս դասերի՝ անուն, բայ, նախածանց, կապ մասնիկ: Յասկային արդեն հայտնի էր հոլովի գաղափարը, սակայն նա չի տարանջատում բառաթեքումը և բառակազմությունը:

Սանսկրիտի ամենաճշգրիտ և ամբողջական վերլուծությունը տրված է Պանինիի քերականության մեջ, որը բաղկացած է ութ գրքից (մ.թ.ա. IV դ.): Այն ենթադրում էր բանավոր հաղորդում ուսուցչից աշակերտին, որը, ըստ հնդիկների, միակ ճշգրիտ իմացությունն է: Միայն մի քանի դար անց այդ քերականությունը



ստացավ գրական տեսք: Այն հիմնվում է խոսակցական լեզվի վրա և կրում է համաժամանակյա բնույթ, չափազանց հակիրճ է, քանի որ նախատեսված է բանավոր սովորելու համար (մոտ 150 էջ): Այն բաղկացած է ութ գլխից, 3996 կարճ օրենքներից: Ըստ էության, այդ քերականությունը *սերող* բնույթ ունի. օգտագործելով ճիշտ բառային միավորներ, ճիշտ կաղապարներ, կատարելով բոլոր փոխակերպումները՝ հնարավոր է ստանալ ճշգրիտ նախադասություն, որը բաղկացած է երկու հիմնական բառերից՝ անունից և բայից: Դրանցից յուրաքանչյուրը ձևայինների շղթա է: Պանդին մեծ տեղ է հատկացնում *հնչյունաբանությանը*՝ նկատի առնելով հնչյունների 1) արտաբերման տեղը և 2) բացվածության աստիճանը: Ընդհանուր առմամբ նա տարբերում է հնչյունների 14 խումբ՝ ձայնավորներ, կիսաձայնավորներ և այլն:

Սակայն նա հնչյունաբանությունը չի տարբերակում ձևաբանությունից: Այստեղ տարբերակվում են 4 խոսքի մասեր՝ անուն, բայ, նախդիր և մասնիկ: Լեզվի հիմնական միավորն է համարվում նախադասությունը:

Ժամանակակից լեզվաբանությունն առաջին հերթին հիմնվում է հունահռոմեական ավանդույթի վրա: Ըստ Գ.Թեյլորի՝ եվրոպական լեզվաբանությունը ծագել է 3-ին 3-ումաստանում, որից հետո այն մշակվել և մեզ է հասել հին հռոմեացիների միջոցով: 3-ենց այս ավանդույթից է ստեղծվել ժամանակակից այբուբենը, ճշգրտվել են խոսքի մասերը, ստեղծվել քերականական տերմինաբանությունը, առաջին անգամ խոսվել է լեզվական նշանի ոչ պայմանականության մասին և այլն:

Հույները ստեղծեցին *այբենական գիրը*, ըստ որի՝ տառերը բաժանվում են բաղաձայնների և ձայնավորների: Դա ոչնչով չի տարբերվում ժամանակակից այբուբեններից: Ի տարբերություն հնդկական ավանդույթի՝ հունարենի նկարագրությունը չէր կարող ընդգրկել գոյություն ունեցող բոլոր տեսքերը: Ավելին, հին հունարենը իրար մոտ բարբառների ամբողջություն է: Համաժողովրդական լեզուն համարվում էր վերբարբառային հաղորդակցման միջոց, որը ծագել էր *Ատտիկայի* բարբառի հիման վրա: Լեզվաբանությունը, ինչպես և հնադարի այլ գիտություններ, չէր տարանջատվում փիլիսոփայությունից: Այս լեզվաբանական ավանդույթում առանձնանում են մի շարք անուններ, որոնցից են հետևյալները. *Անաքսիմենեսը* (560 – 502 մ.թ.ա.) իր «*Հռետորիկա*» գրքում հիմք դրեց ոճաբանությանը: Պարմենիդը տարբերակում էր քերականական իմաստը տրամաբանականից: Հոմանիշության հարցերով զբաղվում էր Պրոդիկը, իսկ Պրոտագորասն առաջինն էր, որ տարբերակեց երեք սեռ՝ արական, իգական և չեզոք, ինչպես նաև

չորս տիպի ասույթներ՝ հարց, պատասխան, խնդրանք և առաջադրանք:

Պլատոնն ստեղծեց հնչյունների *ձայնագիտական* դասակարգումը: Հնչյունները նա բաժանում է ձայնավորների, առանց ձայնավորների և ոչ ձայնայինների: Նա ցուցադրում է իմաստագործառական մոտեցում լեզվին և ուշադրություն չի դարձնում լեզվի ձևական կողմի վրա: Այսպիսին է նրա «*անուն - բայ*» տարբերակումը: Ըստ Պլատոնի՝ անունները այն բառերն են, որոնք նախադասության ենթական են, իսկ բայերը ցույց են տալիս այն, ինչ խոսվում է ենթակայի մասին: Ածականները, որոնք կարող են լինել ստորոգյալներ, դիտվում էին բայերի շարքում: «*Հիղով*» բառը սկզբից Պլատոնն օգտագործում է ցանկացած ոչ թեքական բառաձև ցույց տալու համար: Ավելի ուշ նա ներմուծում է *enthea* անվանումը ուղղականի և *genike* սեռականի համար: Պլատոնը խոսում է նաև չորս տեսակի փոխակերպումների մասին: Սակայն լեզվի ամբողջական նկարագրություն դեռ չկար: Այն առաջին անգամ տրվում է Արիստոտելի աշխատություններում (384 – 322 մ.թ.ա.), որտեղ նա դնում է քերականական արվեստի հիմքը հունահռոմեական ավանդույթում:

Առաջինը և կարևորագույնն այն է, որ նա ճշտեց լեզվական հիմնական միավորները՝ տարրը, վանկը, կապը, անունը, բայը, հոդը, հոլովը և նախադասությունը: Ինչպես և Պլատոնը, Արիստոտելը հնչյունները բաժանում է երեք տեսակի, սակայն դրանց ավելացնում է նաև *արտաբերական* չափանիշ, որը մեծ առաջընթաց էր: Ըստ նրա՝ բառը նշան է: Այն չի կարող լինել ոչ իրական, ոչ կեղծ, քանի որ ուղղակի պատկերացման խորհրդանիշ է, իսկ իրականությանը համապատասխանությունը կամ կեղծ լինելը նախադասության բնութագրումներն են: Նախադասությունը խոսքի միավոր է, որն ունի ինքնուրույն իմաստ և բաղկացած է ավելի փոքր միավորներից՝ բառերից, որոնք նույնպես ինքնուրույն իմաստ ունեն: Ինչպես և Պլատոնը, Արիստոտելը նախադասության մեջ տարբերակում է երկու հիմնական մաս՝ *անուն* և *բայ*՝ ավելացնելով դրանց օժանդակ բառերը (կապեր) և հոդը (այդ թվում և դերանունները): Բացի դրանից, անունի և բայի սահմանումներում առկա են արդեն իմաստային հատկանիշներ. անունը «այն բառն է, որն ունի ինքնուրույն իմաստ՝ առանց ժամանակային երանգավորման», բայն «այն բառն է, որն ունի ինքնուրույն իմաստ, ժամանակային երանգավորմամբ»: Անունը չունի թվի և սեռի կարգեր: Բայի հիմնական ձևն է համարվում I դեմքի եզակի թվի ներկա ժամանակի ձևը, մնացած բոլորը բայական շեղումներ են («*հոլովները*»):